ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 102-Ա

« 13 » ԱՊՐԻԼ 2022Թ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-մասի 4-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ներկայացրած զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2021-2022 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլում «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի աշակերտների կողմից ցուցաբերած բարձր առաջադիմության և մրցանակային տեղեր գրավելու համար՝ տնօրեն Անահիտ Սարգսյանին խրախուսել՝ կիրառելով «կարգապահական տույժի հանում» խրախուսանքը՝ հանելով ՀՀ

Վայոց ձորի մարզպետի 2022 թվականի փետրվարի 4-ի թիվ 38-Ա որոշմամբ կիրառված «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով Ա. Սարգսյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

4/13/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր